# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ-ն ՀՀ ՀԿԿ-ԷԱՃԱՊՁԲ-ՀԱՄԱԶԳԵՍՏ-26/9 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը |
|---|---|
| 21 | Ամենօրյա համազգեստ բաճկոն՝ մուգ կապույտ 44% բուրդ, 54% պ/է, 2% լաիկրա բաղադրության, 240գր/մ2 խտությամբ RIBSTOP կտորից, կոճկվում է կենտրոնական շղթայով, հետևամասը և առաջամասը՝ վերին կտրվածքով, լանջափեշերի վրա վերևից ուղղահայաց վրադիր գրպաններ են՝ ուղղանկյուն կափույրներով: Բաճկոնի կողային գրպանները՝ շեղակի կտրվածքով, շղթայով կոճկվող: Օձիքը՝ ծալովի, թևքերը՝ թեզանիքներով, որոնք կոճկվում են երկու կոճակ օղակներով: Բաճկոնի ձախ կրծքամասում ամրացվում է մուգ կապույտ կտորի վրա «ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵ» ոսկեգույն տառերով գրվածքը, իսկ աջ կրծքամասում՝ «ԱՆՈՒՆ ԱԶԳԱՆՈՒՆ» գրվածքը: Բաճկոնը գոտիով է, կողքերից էլաստիկ ժապավենով ձգված: Ուսադիրների շրջանում՝ երկու փակօղակներ և երկու կամրջակներ ուսադիրների ամրացման համար: Ձախ թևի ուսակարից 90 մմ ներքև Հակակոռուպցիոն Կոմիտեի կարմիր եզրագծով թևքանշանն է (Ձև 8, Նկար 9), համաձայն՝ ՀՀ կառավարության 22.09.2022թ N 1476-Ն որոշման: Ամենօրյա համազգեստ տաբատ՝ մուգ կապույտ 44% բուրդ, 54% պ/է, 2% լաիկրա բաղադրության, 240գր/մ2 խտությամբ RIBSTOP կտորից, ուրվագիծը՝ ուղիղ, կողային կարերով անցնում է կարմիր 1 եզրագիծ՝ 1.5-ից 2 մմ լայնությամբ, երկու կողային գրպաններով, հետնամասի վրա կափույրով և կպչունակով փակվող երկու վրադիր գրպան է: Գոտին՝ երկու կողքերից էլաստիկ ժապավենով ձգվող: Տաբատը՝ շղթայով փակվող, գոտին կոճկվում է կոճակ-օղակով, գոտու վրա 8 հատ գոտեմակ օղակներ են (Ձև 8, Նկար 8, 9), Համաձայն՝ ՀՀ կառավարության 22.09.2022թ N 1476-Ն որոշման: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

ООО Канакери кари фабрика в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ՀԿԿ-ԷԱՃԱՊՁԲ-ՀԱՄԱԶԳԵՍՏ-26/9 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар |
|---|---|
| | технические характеристики |
| 21 | |